

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Միքայել Մելքունյանի, Նաիրա Զոհրաբյանի, Վահե Հովհաննիսյանի և Էլինար Վարդանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-060-30.08.2012,03.09.2012-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Օրենքի նախագծով առաջարկվում է շահութահարկից, արտոնագրային և հաստատագրված վճարներից ազատել նախորդ տարվա գործունեության արդյունքներով մինչև 40 մլն դրամ հարկվող շրջանառություն ունեցող՝ արտոնագրային վճար վճարող և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, վարձու աշխատող չունեցող (բացի ընտանիքի անդամներից) անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ՝

1. Նոր հարկային արտոնությունների սահմանումը չի բխում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության սկզբունքներից և Հայաստանի Հանրապետության կառավարության ստանձնած պարտավորություններից: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախատեսում է շարունակել կրճատել պետության այնպիսի գործառնությունները, որոնք կարող են վնասել ազատ շուկայական մրցակցային հարաբերությունների բնականոն զարգացմանը:

Բացի դրանից, առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցության գնահատման վերաբերյալ որևէ տեղեկատվության կամ վերլուծության արդյունքների, ցանկացած հարկային արտոնության տրամադրմանն ուղղված օրենքի նախագծի ներկայացումը համարում ենք անընդունելի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման օրենքի ընդունումը բավականին դիսկային է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների կրճատման առումով:

Մասնավորապես, նախագծի ընդունման դեպքում անհատ ձեռնարկատերերի համար կատեղծվեն տնտեսական խթաններ՝ գործելու նախագծով առաջարկվող հարկային արտոնությունների ներքո, ինչը մեր կողմից կատարված հաշվարկների համաձայն, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հարկային եկամուտները տարեկան կտրվածքով կկրճատի շուրջ 4.5 մլրդ դրամով: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հարկային եկամուտների կորուստը կանխարգելելու նկատառումներով, անհրաժեշտ կլինի հարկային եկամուտների նշված կորուստը տեղաբաշխել այլ հարկ վճարողների վրա՝ դրանով իսկ բարձրացնելով նրանց հարկային բեռը: Հարկային քաղաքականության նման ուղղությունը, սակայն, նպատակահարմար չենք համարում:

2. Համաձայն նախագծի ընդունման հիմնավորման՝ ակնկալվում է, որ նախագծի ընդունումը հանգեցնելու է նոր աշխատատեղերի ստեղծման ու ապահովելու է գործող աշխատատեղերի

պահպանումը: Այդ կապակցությամբ, գտնում ենք, որ նախագծի ընդունումը ոչ միայն չի ապահովի նշված ակնկալվող արդյունքների ստացումը, այլև կհանգեցնի գործող աշխատատեղերի կրճատման, օրենքով սահմանված կարգով չգրանցված աշխատողների թվի աճի, ինչը հիմնավորվում է հետևյալ նկատառումներով՝

1) նախագծի ընդունման դեպքում անհատ ձեռնարկատերերը կամ առևտրային կազմակերպությունները երբևէ չսահագրգռված չեն լինի նոր աշխատատեղեր բացելու հարցում, քանի որ այդ դեպքում նրանք կգրկվեն նախագծով առաջարկվող հարկային արտոնություններից օգտվելու հնարավորությունից.

2) ներկայումս ընտանիքի անդամներից բացի այլ վարձու աշխատողներ ունեցող անհատ ձեռնարկատերերը և կազմակերպությունները նախագծով առաջարկվող արտոնություններից օգտվելու նպատակով կամ աշխատանքից կազատեն ընտանիքի անդամ չհամարվող վարձու աշխատողներին կամ կօգտագործեն չգրանցված վարձու աշխատողների աշխատանքը:

3. Նախագծի ընդունումը մրցակցային անհավասար պայմաններ կստեղծի գործունեության միևնույն տեսակով զբաղվող անհատ ձեռնարկատերերի համար: Մասնավորապես, նախագծի ընդունման դեպքում այն անհատ ձեռնարկատերը, որն օգտագործում է իր ընտանիքի, օրինակ, հինգ անդամների աշխատանքը, կօգտվի նախագծով առաջարկվող հարկային արտոնություններից, իսկ այն անհատ ձեռնարկատերը, որն օգտագործում է իր ընտանիքի անդամ չհանդիսացող ընդամենը մեկ վարձու աշխատողի աշխատանքը, չի կարող օգտվել հարկային արտոնություններից: Արդյունքում, բազմաթիվ անհատ ձեռնարկատերեր, չկարողանալով դիմակայել անհավասար մրցակցային պայքարում, պարզապես կդադարեցնեն իրենց ձեռնարկատիրական գործունեությունը: Այսինքն, նախագծի ընդունումը ոչ միայն չի հանգեցնի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, այլ նաև կարող է ստեղծել արդեն իսկ ձևավորված ու հաջողությամբ գործող փոքր և միջին ձեռնարկատիրության շատ սուբյեկտների գործունեության դադարեցման ռիսկեր:

Բացի դրանից, նախագծի ընդունումն անհավասար պայմաններ կստեղծի նաև արտոնությունից օգտվելու՝ նախագծով առաջարկվող չափանիշներին բավարարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար: Մասնավորապես, նախագծով ուղղակի հարկերի գծով հարկից ազատման արտոնություն նախատեսվում է միայն շահութահարկի մասով, ինչը նշանակում է, որ նախագծով նախատեսված չափանիշները բավարարող կազմակերպությունները կազատվեն տնտեսական գործունեության արդյունքներից (շահութից) գանձվող հարկից, իսկ անհատ ձեռնարկատերերը՝ ոչ:

4. Նախագծի ընդունման դեպքում արտոնությունից կարող են օգտվել նաև շահութաբերության բարձր մակարդակով առանձնացող՝ ավտոտրանսպորտային գործունեություն, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման գործունեություն կամ ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերն ու կազմակերպությունները, ինչը հարկային քաղաքականության տեսանկյունից համարում ենք սկզբունքորեն անընդունելի:

5. Եթե անհատ ձեռնարկատերերի դեպքում ընտանիքի անդամ համարվող անձինք որոշելի են, ապա կազմակերպությունների դեպքում ընտանիքի անդամ հասկացությունն անհասկանալի է, և պարզ չէ, թե նախագծով առաջարկվող արտոնությունները որ կազմակերպությունների նկատմամբ կարող են կիրառվել:

6. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձանց համար նոր հարկային արտոնությունների սահմանումը համարում ենք ոչ նպատակահարմար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտոնագրային վճարների համակարգն ինքնին արտոնյալ ռեժիմ է, որն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց համար չի հանգեցնում որևէ էական ֆինանսական ծախսերի (օրինակ, Երևան քաղաքում բնակչության պատվերով իրականացվող հազուստի արտադրության և նորոգման գործունեու-

թյան համար «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածով նախատեսված է օրական մոտ 220 դրամ արտոնագրային վճար):

Բացի դրանից, անհասկանալի է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձանց մասով նախագծով առաջարկող՝ տարեկան կտրվածքով հարկվող շրջանառության 40 մլն դրամի չափով շեմի ներդրման նպատակը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտոնագրային վճար վճարող համարվելու համար անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով արդեն իսկ սահմանված է տարեկան շրջանառության մինչև 6 մլն դրամի շեմ:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արտոնագրային վճարների մասին» և «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն, արտոնագրային վճարների կամ հաստատագրված վճարների հարկման համակարգերի կիրառման դեպքում կասեցվում են հարկային օրենսդրությամբ սահմանված բոլոր արտոնությունները, նախագծի ընդունման դեպքում, մինչույն է, դրանով նախատեսված արտոնությունները չեն կարող կիրառվել:

8. 7-րդ հոդվածում անհրաժեշտ է «օրենսդրությամբ» բառը փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 46-րդ հոդվածի և 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները:

9. 3-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է խմբագրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, անհատ ձեռնարկատերը հաշվառվում է և ոչ թե գրանցվում:

10. Համաձայն 10-րդ հոդվածի՝ տարածքային հարկային տեսչությունները պարտավոր են եռօրյա ժամկետում ուսումնասիրել և տնտեսավարող սուբյեկտին տրամադրել տեղեկատվություն արտոնությունից օգտվողի կարգավիճակ ստանալու վերաբերյալ: Այս առումով,

Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, նախագծով անհրաժեշտ է կարգավորել նշված եռօրյա ժամկետում տնտեսավարող սուբյեկտին պատասխան չտալու դեպքում հարկային տեսչությունների աշխատողների համար հնարավոր իրավական հետևանքների հարցերը:

11. Նախագծում օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն:

Մասնավորապես՝

ա) 1-ին հոդվածում անհրաժեշտ է խմբագրել և պարզաբանել «Հայաստանի Հանրապետության և նշված տնտեսավարող սուբյեկտների իրավահարաբերությունները» բառերը, իսկ նախագծի 3-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակեցնել «ընդ տանիք-ընտանիք» բառերը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջները,

բ) 4-րդ հոդվածը նորմատիվ բնույթի դրույթներ չի նախատեսում և վերաբերում է միայն արտոնության տրամադրման անհրաժեշտությանը և հիմնական նպատակին: Այս առումով, գտնում ենք, որ նշված հոդվածի անհրաժեշտությունը չկա,

գ) 6-րդ հոդվածում անհրաժեշտ է «11» թիվը փոխարինել «12» թվով, քանի որ խոսքը 12-րդ հոդվածի մասին է,

դ) 12-րդ հոդվածի վերնագիրն անհրաժեշտ է խմբագրել և համապատասխանեցնել նախագծի վերնագրին, որի համաձայն, հարկային արտոնությունից օգտվում են վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերը և առևտրային կազմակերպությունները, այլ ոչ թե գործունեության տեսակները՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները (նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 13-րդ և 14-րդ հոդվածներին, որոնց վերնագրերը չեն համապատասխանում հոդվածների բովանդակությանը):

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը:

Տեղեկացնում ենք, որ օրենքի նախագծի ընդունման դեպքում այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

Կից ներկայացվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին» ՀՀ օրենքի նախագծի

«Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն**:

**ՀԱՎԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային
կազմակերպություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային
կազմակերպություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության
բնագավառում կարգավորման**

1. «Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) սահմանվում է հարկային արտոնություններ վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին» ՀՀ օրենքի նախագծի գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **բացասական** ազդեցություն:

Նախագծով նախատեսվում է ՀՀ-ում տարեկան մինչև 40 մլն դրամ շրջանառություն ունեցող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձանց, վարձու աշխատող չունեցող (բացառությամբ ընտանիքի) անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին ազատել հարկային պարտավորություններից, մասնավորապես՝ շահութահարկից, արտոնագրային և հաստատագրված վճարներից: Հետևաբար, ՀՀ տարբեր տնտեսավարող սուբյեկտների համար կկիրառվեն շահութահարկի, արտոնագրային և հաստատագրված վճարների վճարման տարբեր մոտեցումներ:

Միաժամանակ, քանի որ ներկայումս ընտանիքի անդամներից բացի այլ վարձու աշխատողներ ունեցող անհատ ձեռնարկատերերը և առևտրային կազմակերպությունները

նախագծով առաջարկվող արտոնություններից օգտվելու նպատակով աշխատանքից կազատեն ընտանիքի անդամ չհամարվող վարձու աշխատողներին կամ կօգտագործեն չգրանցված վարձու աշխատողների աշխատանքը, հետևաբար, այն կհանգեցնի չգրանցված աշխատողների թվի, ինչպես նաև սովերային տնտեսության ավելացմանը և ՀՀ տարբեր տնտեսավարող սուբյեկտների համար կսահմանվեն տարբեր «խաղի կանոններ», ինչը հակասում է ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության շուկայական սկզբունքներին:

Եզրակացություն

«Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է շահութահարկից, արտոնագրային վճարից կամ հաստատագրված վճարից ազատել նախորդ տարվա գործունեության արդյունքներով մինչև 40 միլիոն դրամ հարկվող շրջանառություն ունեցող՝ արտոնագրային վճար վճարող համարվող ֆիզիկական անձանց, վարձու աշխատող չունեցող (բացի ընտանիքի անդամներից) անհատ ձեռնարկատերերին և առևտրային կազմակերպություններին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կլինի բացասական: Մասնավորապես, նախագծի ընդունման դեպքում անհատ ձեռնարկատերերի համար կստեղծվեն տնտեսական խթաններ՝ գործելու նախագծով առաջարկվող հարկային արտոնությունների ներքո, ինչը մեր կողմից կատարված հաշվարկների համաձայն, ուղղակի և անուղղակի ազդեցությամբ պետական բյուջեի հարկային եկամուտները տարեկան կտրվածքով կկրճատի շուրջ 4.5 մլրդ. դրամով:

Հայտնում ենք նաև, որ նախագծի ընդունումը պետական բյուջեի ծախսերի ավելացման կամ պակասեցման չի հանգեցնի:

Պ-060-30.08.2012,03.09.2012-SՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԵՐԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձանց, վարձու աշխատող չունեցող (բացառությամբ՝ ընտանիքի անդամների) անհատ ձեռնարկատերերին եւ առետրային կազմակերպություններին հարկային արտոնություն (այսուհետ՝ արտոնություն) տրամադրելու հետ կապված Հայաստանի Հանրապետության եւ նշված տնտեսվարող սուբյեկտների իրավահարաբերությունները, արտոնությունից օգտվողների շրջանակը, արտոնության տրամադրման անհրաժեշտությունը, նպատակը եւ ժամկետները, արտոնության տրամադրման կասեցման պայմանները, ինչպես նաեւ սահմանում է սույն արտոնությունից չօգտվող գործունեության տեսակների ցանկը:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքի գործողությունը տարածվում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձանց, վարձու աշխատող չունեցող (բացառությամբ՝ ընտանիքի անդամների) անհատ ձեռնարկատերերի եւ առետրային կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության վրա (բացառությամբ՝ սույն օրենքով սահմանված գործունեության տեսակների):

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1. Ընտանիք՝ սույն օրենքի իմաստով ընտանիքը սահմանվում է որպես սոցիալական ինստիտուտ, որը միավորում է ընդհանուր բյուջետային ծախսերով կապված մարդկանց, որոնք բնակվում են նույն տարածքում՝ նույն տանիքի տակ (ընդ տանիք-ընտանիք) կամ ունեն կենսաբանական ընդհանրություն՝ զավակներ, ծնողներ.
2. Վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատեր կամ առետրային կազմակերպություն՝ օրենքով սահմանված կարգով հարկային մարմիններում գրանցված անհատ ձեռնարկատերեր կամ առետրային կազմակերպություններ, որոնք չունեն վարձու աշխատողներ՝ բացառությամբ ընտանիքի անդամների:

Հոդված 4. Արտոնության տրամադրման անհրաժեշտությունը եւ հիմնական նպատակները

Արտոնության տրամադրման անհրաժեշտությունը առավելապես պայմանավորված է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձանց, վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերի եւ առետրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման, նոր աշխատատեղերի ստեղծման եւ գործողների պահպանման, հանրային կյանքի սոցիալական խնդիրների առավել հասցեական լուծման եւ ժամանակակից հասարակության հիմքը կազմող միջին խավի ձեւավորման եւ կայացման տեմպերի արագացման պահանջներով:

Արտոնության տրամադրման հիմնական նպատակներն են.

1. Փոքր եւ միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) ոլորտում գործարար եւ ներդրումային միջավայրի բարելավումը
2. Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցության տրամադրումը
3. ՓՄՁ սուբյեկտների տնտեսական գործունեության շահութաբերության բարձրացումը
4. ՓՄՁ սուբյեկտների գործունեության համար լուրջ խթանների ստեղծումը
5. ՓՄՁ սուբյեկտների հարկային բեռի կրճատումը

6. ՓՄՁ սուբյեկտների շրջանառու միջոցների ընդլայնումը

7. Հայրենական արտադրության խթանումը

8. Նոր աշխատատեղերի ստեղծումը

9. Բնակչության եկամուտների աճը:

Հոդված 5. Արտոնությունից օգտվողների շրջանակը

Սույն օրենքով սահմանված արտոնությունից կարող են օգտվել այն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձինք, վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերը եւ առետրային կազմակերպությունները, որոնց նախորդ տարվա տարեկան հարկվող շրջանառությունը չի գերազանցել 40 միլիոն դրամը:

Հոդված 6. Արտոնության փրամադրման կարգը

Սույն օրենքի 5-րդ հոդվածի պահանջներին բավարարելու եւ սույն օրենքի 11-րդ հոդվածում նշված գործունեության տեսակներից որեւէ մեկով չզբաղվելու դեպքում հարկատուն, իր հայեցողությամբ, կարող է օգտվել սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված արտոնությունից:

Հոդված 7. Արտոնության սահմանման կարգը

Սույն օրենքի իմաստով հարկային արտոնությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շահութահարկից, արտոնագրային եւ հաստատագրված վճարներից ազատումն է:

Հոդված 8. Արտոնության փրամադրման ժամկետները

Արտոնությունը տրամադրվում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձանց, վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին եւ առետրային կազմակերպություններին՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի առաջին մասով սահմանված փաստաթղթերի հարկային մարմին ներկայացման օրվանից:

Հոդված 9. Հարկային տեսչություն ներկայացվող փաստաթղթերի փաթեթը

Սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված արտոնությունից օգտվողի կարգավիճակ ստանալու նպատակով տնտեսվարող սուբյեկտը տարածքային հարկային տեսչություն պարտավոր է ներկայացնել.

1. Դիմում՝ հարկային արտոնությունից օգտվելու վերաբերյալ
2. Տեղեկանք՝ վարձու աշխատողների վերաբերյալ
3. Տեղեկանք՝ նախորդ տարվա հարկվող եկամտի վերաբերյալ:

Վարձու աշխատողի՝ տնտեսվարող սուբյեկտի ընտանիքի անդամ լինելու փաստն արձանագրվում է՝

- 1) անձնագրի պատճենի
- 2) ամուսնության վկայականի պատճենի
- 3) ծննդյան վկայականի պատճենի
- 4) հայրության ճանաչման վերաբերյալ փաստաթղթի
- 5) բնակության վայրի վերաբերյալ տեղեկանքի ներկայացմամբ:

Գործունեությունը նոր սկսող տնտեսվարող սուբյեկտները չեն ներկայացնում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված փաստաթուղթը:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձինք չեն ներկայացնում սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված փաստաթուղթը:

Սույն հոդվածի առաջին մասով սահմանված դիմումի եւ տեղեկանքների ձեւերը սահմանվում են սույն օրենքի անբաժանելի մաս կազմող [Հավելված 1-ում](#):

Հողված 10. Հարկային տեսչությունների կողմից անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձանց, վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին եւ առևտրային կազմակերպություններին արտոնությունից օգտվողի կարգավիճակ տրամադրելը

Տարածքային հարկային տեսչությունները, տնտեսվարող սուբյեկտներից ստանալով սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը, պարտավոր են եռօրյա ժամկետում ուսումնասիրել եւ տրամադրել տեղեկատվություն տնտեսվարող սուբյեկտին արտոնությունից օգտվողի կարգավիճակ ստանալու վերաբերյալ:

Հողված 11. Արտոնության տրամադրման կասեցումը

Սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված արտոնության տրամադրումը կասեցվում է, երբ արտոնությունից օգտվողի կարգավիճակ ստացած տնտեսվարող սուբյեկտն աշխատանքային պայմանագիր է կնքում ընտանիքի անդամ չհանդիսացող ֆիզիկական անձի հետ:

Ընտանիքի անդամ չհանդիսացող վարձու աշխատողի ներգրավման դեպքում արտոնությունը կասեցվում է վարձու աշխատողի ներգրավման ամսվա 1-ից:

Այս դեպքում արտոնությունից օգտվողի կարգավիճակ ստացած տնտեսվարող սուբյեկտը պարտավոր է տարածքային հարկային տեսչություն ներկայացնել դիմում՝ արտոնությունից օգտվողի կարգավիճակից հրաժարվելու վերաբերյալ:

Արտոնությունից օգտվողի կարգավիճակից հրաժարվելու վերաբերյալ դիմումի ձեւը սահմանվում է սույն օրենքի անբաժանելի մաս կազմող [Հավելված 2-ում](#):

Հողված 12. Արտոնությունից չօգտվող գործունեության տեսակները

Սույն արտոնությունը չի տարածվում

1. Վարկային կազմակերպությունների
2. Ապահովագրական կազմակերպությունների
3. Ներդրումային հիմնադրամների
4. Գրավատների
5. Փոխանակման կետերի
6. Արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների
7. Խաղատների եւ շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների
8. Աուդիտորական կամ խորհրդատվական ծառայություններ մատուցողների
9. Ալցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողների
10. Լիցենզավորման ենթակա այն գործունեություն իրականացնող կամ լիցենզիա ունեցող այն անձի նկատմամբ, որի գործունեության լիցենզիայի համար պետական տուրքի տարեկան գումարը սահմանված է 100 հազար դրամ կամ ավելին,

ինչպես նաեւ դուստր եւ կախյալ տնտեսական ընկերությունների վրա:

Հողված 13. Եզրափակիչ մաս

Եթե Հայաստանի Հանրապետության անունից կնքված եւ վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Հողված 14. Անցումային դրույթներ

Սույն օրենքն ուժ մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՎԱՃՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ**

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները, երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունը նոր պահանջներ են ներկայացնում մասնավոր հատվածի, մասնավորապես փոքր եւ միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման ուղղությամբ: Մասնավորապես՝ անհրաժեշտություն է առաջացել վերանայել ՓՄՁ ոլորտին հարկային արտոնությունների տրամադրման չափորոշիչները, ինչն էլ կհանգեցնի պետական աջակցության առավել նպատակային իրականացման:

Ըստ էության, սույն նախագծով ընդլայնվում են ՓՄՁ ոլորտին պետական աջակցության ուղիները: Ավելին՝ ՀՀ տնտեսության հետզհետե ամրապնդման եւ ստեղծված իրավիճակը պահանջում է սոցիալական եւ հանրային մեծ նշանակություն ունեցող ՓՄՁ, այդ թվում՝ ընտանեկան ձեռնարկատիրության զարգացման համար ձեւավորել համարժեք եւ բարենպաստ մրցակցային պայմաններ: Գործունեությունը նոր սկսող ՓՄՁ սուբյեկտների համար անհամեմատ կնվազեն շուկա մտնելու, կայանալու խոչընդոտները, կծեւավորվի առավել արդյունավետ ներդրումային միջավայր: Օրենքի ընդունումը կբարելավի նաեւ ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական գրավչության մակարդակը:

Փորձագիտական հաշվարկները եւ գնահատականները ցույց են տվել, որ ՀՀ-ում տարեկան մինչեւ 40 մլն դրամ շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների ամսական զուտ եկամուտը՝ կախված գործունեության տեսակից եւ շուկայական մրցակցային պայմաններից, ինչպես նաեւ սեզոնայնությունից, տատանվում է 200-450 հազար դրամի սահմաններում:

Անհրաժեշտ է արձանագրել նաեւ, որ վերոնշյալ եկամտային միջակայքում գործող տնտեսվարող սուբյեկտների եկամուտները (անցած հինգ տարիների ընթացքում) հիմնականում նվազման միտում ունեն:

Մինչեւ 40 մլն դրամ տարեկան շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները հենց այն թիրախն են, ում նկատմամբ պետությունը պետք է ցուցաբերի տարբերակված մոտեցում հարկային արտոնությունների տրամադրման տեսքով:

Սույն օրենքի շրջանակներում մինչեւ 40 մլն դրամ շրջանառության ամրագրումը բխում է «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքի տրամաբանությունից:

Սույն արտոնությունից օգտվող տնտեսվարող սուբյեկտների մոտ հարկային պարտավորությունների նվազեցումից, մասնավորապես՝ շահութահարկից, արտոնագրային եւ հաստատագրված վճարներից ազատումից առաջացած գումարները մի կողմից կհանգեցնեն ձեռնարկություններում ներդրումների ավելացմանը, մյուս կողմից՝ կծեւավորեն վճարունակ պահանջարկ, ինչն էլ շրջայական ձեւով դրականորեն կանդրադառնա տնտեսության աշխուժացման վրա:

2. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Սույն օրենքի ընդունումը էապես կբարելավի փոքր եւ միջին ձեռնարկատիրության մաս կազմող ընտանեկան բիզնեսի կայացման եւ հետագա զարգացման պայմանները, կստեղծի գրավիչ ներդրումային միջավայր այս ոլորտի ընդլայնման համար:

Միաժամանակ, նախագծի ընդունմամբ կծեւավորվեն լրացուցիչ շրջանառու միջոցներ փոքր եւ միջին բազմաթիվ տնտեսվարողների համար, որն էլ իր հերթին մի կողմից կստեղծի լրացուցիչ պահանջարկ ապրանքների, հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների, ծառայությունների եւ այլնի նկատմամբ, մյուս կողմից՝ հնարավորություն կստեղծի ընտանեկան բիզնեսի ընդլայնման եւ դրանցում շահութաբերության բարձրացման համար:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձանց, վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին եւ առետրային

կազմակերպություններին հարկային արտոնության տրամադրմամբ դրանց ծախսերի եւ եկամուտների հաշվեկշիռը կթեքվի դեպի եկամուտների կողմը:

Սույն օրենքի ընդունումը կունենա հանրային եւ սոցիալական մեծ նշանակություն:

3.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք. Նախագիծը մշակվել է ՀՀ ԱԺ պատգամավորներ Միքայել Մելքումյանի, Նաիրա Զոհրաբյանի, Վահե Հովհաննիսյանի կողմից՝ մասնագետ-փորձագետների մասնակցությամբ: